

յուզէն և իրօր կը ձգեն իրենց որ և իցէ մէկ կիրքը գոհացնելու համար :

Չեր յանցանքն միայն ձեր տգիտութիւնն է հայրենակիցք իմ, իսկ աւելի յանցանաւորն, աւելի չարեաշատարան և աւելի դատապարտելին ձեր պարագլուխ այն երկու անխիղճ խնատուն կարծուածներն են, որ իբրեւ վէմ գայթակղութեան միշտ ձեր գլխումը պատճառ կը դառնան, և ձեր իրար ընկած ու եղբայր զեղբայր հալածած տունը նոքա իրենց կիրքը գոհացնելով հեշտանալու ետեւէ են : Այս երկու անձանց ոգին պէտք է դուք լաւ ծանաչէք հայրենակիցք իմ, որք ձեր կարծեցեալ բարերարները կը համարուին, մին ծերացեալ յամբարտաւանութեան, իւր սիրտը աթոռքած է սատանային և իւր անձը նորա պատուանդան, միւսն վարժեալ 'ի կեղծաւորութիւն իւր ամեն գործոցը մէջ իւր շահը կը նկատէ միայն, այս երկուքն են, հայրենակիցք իմ, որ մին մէկ ծայրը կեցած, միւսն մէկ, զձեզ կը տատանեն ու կը ստբուրբերեն, ձեր առ ինքեանս ունեցած հաւատքն ու վստահութիւնը չարաչար գործածելով, մին քարոզկոյր մոլեռանդութեան, միւսն քարոզանկրօնութեան, մին Արեւեանն, միւսն Արդանէսեանն : Եւ այն երկու կամապաշտ և անձնասէր ծամարտակներէն հեռի կեցիք, որպէս զի կըրկին և կրկին չնոյաք նոցա լարած որդայթներուն մէջ, կրկին կաղաչեմ ձեզ եղբարք իմ, դուք որ սխալմամբ հեռացած էք ձեր մայրենի եկեղեցիէն, դարձէք կաղաչեմ, դարձէք կրկին նորա մայրական զիրկը, մի խաբուիք օտարներու սուտ խոստումներէն, համոզուեցէք, որ մարդ մը իւր հայրենի տան մէջ չի գտած հանդիսաւ, չէ կարելի օտարի տան մէջ գտնել, հե-

ռայէք նսեւ այն անձէն որ ձեզ յայդր առաջնորդեց, տեսէք հայրենակիցք իմ, տեսէք և իւր կիսնքէն դատեցէք ձեր ազատամիտ և ազգասէր Արեւեանը, տեսէք այս քանի անգամ եղաւ որ կրօնափոխութեան կը դիմէ երբեմն 'ի բողբոսկանութիւն, և այժմ 'ի Պատրկանութիւն : ուստի կը խնդրեմ եղբարք իմ, ձեր օգտին համար հեռացէք այդ մարդէն, իրբեւ անսկիզբուէք, յեղեղուէք, շահասէր և անխիղճ մարդէ մը, աշխատեցէք այսու հետեւ աւելի լաւ ծանաչել ձեր ճշմարիտ բարեկամները և աւելի խոհեմութեամբ ընել ձեր որոշումներն :

Չեր օգուտը ձեր միութեան մէջ է հայրենակիցք իմ, ուստի 'ի բաց մերժելով ձեզմէն երկպառակութեան և անմիաբանութեան ոգին, սիրով միացէք իրարու հետ և ժողովեամբ աշխատեցէք ձեր և ձեր որդւոց ճշմարիտ լուսաւորութեանը համար, և ահա այն ատեն պիտի տեսնէք որ, ոչ որ չ'պիտի կրնայ վնասել ձեզ և հետեւապէս դուք սլ ոչ որք չը պիտի վնասուիք :

Ինդրելով որ ձեր պանդուխտ հայրենակցին ձայնը լսելի ըլլայ ձեզ, մնամ զձեզ սիրող 'ի սրտէ :

1873 Յունիս 1
յերուսաղէմ :

Ս. Գեորգ Ըս.
հանեան Երեւանցի :

ԳԻՇԵՐՈՒԿ ԳՊՐՈՏ ՅԱՆԹԱՊ

Անթապէն եկած նամակէ մը հետեւեալ խիստ ուրախակի տեղեկութիւնը քաղելով բերկրութեամբ կը հրատարակեմք յուրախութիւն ազգայնոց և 'ի բաջալերութիւն Անթապոնոց :

Տեղայն իշխանք և Թ. խորհրդոյ Անթ. Անթապէ քանի մը ազգային խնդրոյ

կարգադրութեան համար յատուկ հանրադրով մը հրաւիրած են զՆորին Վ. Տ. Տ. Սկրտիչ Ս. Կաթողիկոսը. կարգադրելիք խնդրոց մին է Մեթապի մէջ գիւնթողիկ գարոց մի բանալ, որոց հաստատութեան համար տեղացիք մեծ եռանդեամբ յոժարամիտ փափագ կը յայտնեն. և աղբային օգտի ցանկացող պատուարժան անձինք աւմենայն ջանիւք հոգ կը տանին այս ձեռնարկութիւնը օր յառաջ ՚ի կատար հասցնելու: Ս. յա գործոյն ՚ի նպատակ հանգանակութիւններ կը լինին և իւրաքանչիւր բարեակէր աղբային անհատ յոժարակամ բոտ իւրում կարի շաբաթական բաժին կը գրուի, 5 փարայէն մինչեւ 40 փարայ. ամէն մէկ անհատ ինչ բաժին որ գրուած է ամեն շաբաթ ամբողջապէս հաստուցանելու պայմանաւ: Իւրաքանչիւր թաղի մարդիկը գրելու և կանոնաւոր հաւաքումն ընելու համար Վ. Կաթողիկոսի և թ. խորհրդոց կողմանէ վստահութեան արժանի անձինք տեսուչ կարգուած են ամեն թաղի վերայ, ամեն մէկ տեսուչ ալ իւր ձեռքին տակ տասնապետներ ունին, որք տասնական տան բաժիններն հաւաքելու հոգ պիտի տանին: Ողբա իրենց հաւաքածները հաշուով իրենց տեսչին պիտի յանձնեն, նոքա ալ գանձապետին: Վ. երջապէս ամեն կարելի միջոց կը գործադրուի, որպէս զի այս գործը առանց թուլնալու յառաջ քայլէ և սկզբնաւորութիւն լինի գարոցին հաստատութե: Երդէն շաբաթականներն կանոնաւորապէս սկըսան հաւաքուիլ, մէն մի սնահատ ուրախութեամբ կը վճարէ իւր գրուած բաժինը. մեծ յայտ ունիմք որ պիտի յառաջանայ այս խիստ օգտակար, մի անգամայն և ամենակարեւոր ձեռնարկութիւնը, որովհետեւ բաժինները մեծ բան մի չեն, և ամենէն աղքատն

անգամ կարող է վճարել առանց զըժուարութեան: —

Սեբ եւս հրատարակելով այն աղբային օգտակար տեղեկութիւնը կը գովեմք Մեթապի մեր սիրելի աղբայնոց այս աղնիւ եռանդը և աներկ միտ յուսով կրպակսեմք իրենց ձեռնարկած աղբօգուտ գործոյն հաստատութիւնը և արդիւնաւոր յարատեւութիւնը տեսնել, որ մեծ պատիւ և յաւերժական փառք է թէ իրենց եւ թէ Նորին Վ. Ս. Կաթողիկոսի համար:

Նշանի՛ այն աղբին, որ իւր մատաղ սերունդը դաստիարակելու եռանդ ու ջանքն ունի, որով իւր աղբային եւութիւնը կը հաստատէ անխախտ հիման վերայ. և բիւր երանի՛ այն աղբին որ դաստիարակութեան հիմն ալ գիտէ հաստատվիմի վերայ դնել. ու չէ թէ աւազի՛ Վաստիարակութեան հոգ տալ նող աղբը եթէ գիտնայ, որ արտաքին երեւութական ձեւերը, զարդերն ու հանդիսաւոր արարողութիւնները ոչ դաստիարակութիւն են և ոչ յառաջադիմութիւն, նա առաջին քայլն առած կը լինի: Վր մաղթեմք ինչպէս մեր բոլոր սիրելի աղբի համար, նոյնպէս և Մեթապիոց որ այսպէս ճշմարիտ դաստիարակութեան ցանկացող եւ հետեւող լինին:

Մտկուայի մէջ սկսած է հրատարակուիլ մի նոր պարբերական տետր ՓԵՐՈՍ անուամբ խմբագրութեամբ Օ. արմայրայ Սերեանց: Սոյն տետրի առաջին թիւն միայն մեր ձեռքն հասաւ, որոյ մէջ քանի մի բանաքննական յօդուածներէ զատ՝ կայ նաեւ մի դիտողութիւն Սուսերէն Նիկա (անգաւտան) լրագրի մի հաստուածոյն վերայ, որ հրատարակուած է Վ. Եհափառ Գէորգ Վ. Կաթողիկոսի նկատմամբ: